ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 04 2022թ. N 160-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՐՏԵՆԻԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի երկրորդ մասի «դ» ենթակետով, 17-րդ հոդվածի «ե» ենթակետով, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրպետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2022 թվականի փետրվարի 3-ի N 129-Ն որոշման հավելված N 1 4-րդ մասի «1» ենթակետով և հիմք ընդունելով «Արտենիի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ ՊՈԱԿ) տնօրենի 2022 թվականի ապրիլի 6-ի N 39 գրությունը, որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Արտենիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ կանոնադրության IV գլխում կատարել հետևյալ փոփոխությունները.

   ա) 25-րդ կետի «կազմակերպության» բառը փոխարինել «կազմակերպությունների» բառով

բ) 31-րդ կետի «մանկավարժական» բառից հետո լրացնել ստորակետ կետադրական նշանով և «մասնագիտական (բժշկական)» բառերով

գ) 32-րդ կետի 5-րդ ենթակետի «բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ» նախադասությունը փոխարինել «պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի գանձապետարանում բացում է հաշիվներ» նախադասությամբ:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Արտենիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ տնօրենին՝ իրականացնել սույն որոշմամբ հաստատված կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարկման օրվա հաջորդ օրվանից:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 13.04.2022 15:26:37 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ